Հաստատում եմ
Հայաստանյան Համալսարանի ռեկտոր,
պրոֆեսոր՝ Է.Մ. Սանդոյան
10 դեկտեմբերի 2024թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աննա Աշոտի Կովալյովայի ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Пластика движений: особенности проявления и методика совершенствования в процессе физического воспитания» վերնագրով ատենախոսության վերաբերյալ

Գիտամեթոդական գրականության մեջ մասնագետները կոորդինացիոն ընդունակությունների շարքում առանձնացնում են շարժումների պլաստիկան: Պլաստիկ շարժումները բնութագրվում են շարունակականությամբ, ամբողջականությամբ, սահունությամբ, շարժումների կատարումը առանց դադարների: Շարժումների պլաստիկայի նպատակային ձևավորումը հնարավորություն է տալիս լուծելու մարդու ֆիզիկական, գեղագիտական, մտավոր կատարելագործման մի շարք խնդիրներ:

Շարժումների պլաստիկայի ուսումնասիրմանը նվիրված վերջին տարիների հետազոտությունները հնարավորություն են տվել ընդգծել դրա դրսևորման առանձնահատկությունները, կատարելագործման մեթոդների հիմնական ուղղությունները, դրա հետ մեկտեղ դեռ լիովին ուսումնասիրված չեն դպրոցականների շարժումների պլաստիկայի նպատակային զարգացումը ֆիզիկական կուլտուրայի դասերին:

Ա.Ա. Կովալյովայի ատենախոսությունը նվիրված է շարժումների պլաստիկայի տարբեր դրսևորումների ուսումնասիրմանը և դրա կատարելագործման մեթոդիկայի մշակմանը 7-8-րդ դասարաններում ֆիզիկական կուլտուրայի դասերին:

Ատենախոսության կառուցվածքը կրում է դասական ձև, բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից: Աշխատանքը շարադրված է համակարգչային 110 էջում, ընդգրկում է 22 աղյուսակ, 22 գծապատկեր, հավելված: Գրականության ցանկում բերված են 156 մատենագիտական սկզբնաղբյուրներ:

Ներածությունում ատենախոսը ներկայացրել է աշխատանքի նպատակը, խնդիրները, օգտագործված մեթոդները, ինչպես նաև ատենախոսության գիտական

նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակի կողմից կատարվել է ուսումնասիրվող հիմնահարցի վերաբերյալ գրականության խորը վերլուծություն, ինչը հնարավորություն տվեց բացահայտել պրոբլեմային իրավիճակը և ընտրել նրա լուծման ուղիները:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացված են հետազոտման մեթոդները և կազմակերպումը: Հարկ է նշել, որ հեղինակը շարժումների պլաստիկայի հետազոտման համար կիրառել է բազմազան մեթոդներ:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են տարբեր տարիքային խմբերի՝ դպրոցականների, ուսանողների և առողջարարական ֆիզկուլտուրայով զբաղվող մեծահասակ կանանց շարժումների պլաստիկայի ուսումնասիրման արդյունքները: Այն հնարավորություն տվեց հայցորդին բացահայտել շարժումների պլաստիկայի տարբեր դրսևորումների տարիքային առանձնահատկությունները, դրանց փոխկապակցվածությունը:

Ատենախոսության չորրորդ գլխում ներկայացված են ձևավորող գիտափորձի արդյունքները: Հեղինակը մշակվել է 7-8-րդ դասարանների դպրոցականների շարժումների պլաստիկայի կատարելագործման մեթոդիկան և նրդրել է այն ֆիզիկական կուլտուրայի դասերին:

Ամփոփելով գիտափորձի արդյունքները կարելի փաստել, որ Ա.Ա. Կովալովայի կողմից մշակված մեթոդիկան նպաստում է դպրոցականների վարժությունների կատարման տեխնիկայի կատարելագործմանը, շարժողական բազայի ընդլայնմանը, դպրոցականների մոտ շարժումների կուլտուրայի ձևավորմանը:

Հեղինակը իր հետազոտության արդյունքները ներկայացրել է միջազգային և հայրենական ամսագրերում ու գիտական ժողովածուներում:

Վերլուծելով ատենախոսական աշխատանքը, առանձնակի հարկ ենք համարում շեշտադրել հետազոտության արժեքավոր կողմերը.

- Հեղինակի կողմից կատարվել է ուսումնասիրվող հիմնահարցի վերաբերյալ գրականության խորը վերլուծություն, ինչը հնարավորություն տվեց դիտարկել շարժումների պլաստիկան որպես գիտական ուսումնասիրության առարկա:
- Հետազոտության ընթացքում ատենախոսի կողմից կիրառվել են բազմազան և մեծ քանակով մեթոդներ, որոնք թույլ տվեցին համակողմանի ուսումնասիրել շարժումների պլաստիկայի դրսևորումները:
- Հեղինակի կողմից մշակվել է և ներդրվել շարժումների ռիթմոպլաստիկայի գնահատման թեստ:

• Բացահայտվել են շարժումների պլաստիկայի տարբեր դրսևորումների միջև կոռելյացիոն կապեր, ինչը ցույց է տալիս դրանց փոխներգործությունը և փոխազդեցությունը: Բացահայտվել են փոխկապակցվածություններ ձեռքի շարժումների պլաստիկան բնութագրող ցուցանիշների և տարածական բնութագրերի ու մկանային ճիգերը տարբերակելու կարողության միջև:

Առանձնահատուկ պետք է նշել, որ աշխատանքն աչքի է ընկնում իր բաժինների տրամաբանական հերթականությամբ՝ ապահովելով մանկավարժական գիտափորձի տեսական և մեթոդական հիմքը:

Հեղինակը լիովին լուծել է հետազոտության առջև դրված խնդիրները, որոնք հիմնավոր արտացոլված են եզրակացություններում:

Ա.Ա. Կովալյովան իր հետազոտության արդյունքները ներկայացրել է միջազգային և հայրենական ամսագրերում ու գիտական ժողովածուներում:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը և կարևորելով ստացված արդյունքների գործնական նշանակությունը, հարկ ենք համարում նշել որոշ դիտողություններ.

1. Հեղինակը, ուսումնասիրելով ուսանողների շարժումների պլաստիկայի տարբեր դրսևորումների առանձնահատկությունները, առանձնացրել է երկու խմբերի՝ սպորտով զբաղվողների և չպարապողների: Ցանկալի կլիներ, որ ստացած ցուցանիշները վերլուծվեին նաև ըստ մարզաձևերի:
2. Չորրորդ գլխում հեղինակը նկարագրել է շարժումների պլաստիկայի զարգացման ընդհանուր մեթոդական մոտեցումները, իսկ վարժությունները ներկայացված են հավելվածում, ինչը դժվարեցնում է ընդհանուր պատկերացում կազմել առաջարկված հեղինակային մեթոդիկայի մասին:
3. Ցանկալի կլիներ, որ հեղինակը իր հետազոտության հիման վրա պատրաստեր մեթոդական ցուցումներ ուսուցիչների համար:
4. Տեքստում առկա են տեխնիկական վրիպումներ (էջ 8, 68, 69,70, 83,84,85,91,92,93):

Սակայն վերոնշյալ դիտողությունները չեն ազդում աշխատանքի բարձր գնահատմանը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և նրանում լիովին արտացոլված է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աննա Աշոտի Կովալյովայի «Пластика движений: особенности проявления и методика совершенствования в процессе физического воспитания» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտական թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է համալսարանի ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի նիստում (արձանագրություն թիվ 10), որին մասնակցել են՝ մ.գ.դ., դոցենտ Ա.Լ. Գրիգորյանը, մ.գ.թ., պրոֆեսոր Ս.Ս. Հակոբյանը, մ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, հ.գ.թ., դոցենտ Մնացականյան Բարեղամ, Ն.Հ. Աբրահամյանը, Ա.Ժ. Աբրահամյանը, Է.Բ. Սիմոնյանը, Գ.Ս. Իսրայելյանը, Ա.Հ. Գալստյանը, Ա.Ա. Շալջյանը:

ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ՝ /ստորագրություն/ Գրիգորյան Ա.Լ.

Հայ-Ռուսական համալսարանի գիտական քարտուղար /ստորագրություն/ Ռ.Ս. Կասաբաբովա